Բ. ՏԱՐԻ ՆԻՒ ԵՈՐՔ ՅՈՒՆԻՍ 1 1892 Թիւ 11

ՀԱՅՔ

ՀԱՆԴԷՍ ԱԶԳԱՅԻՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԱՄՍՈՑ 1ԻՆ ԵՒ 15ԻՆ

Տէր և Խմբագիր — Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ Editor — M. S. GABRIEL M. D.

202 W. 23d St., New York.

Տարեկան բաժնեգինն է ամեն երկրաց համար 2 թալէր կամ 10 Ֆրանք։

Բաժանորդագրութիւնք կը հաշուին Յունվար 1 էն։

Հ. ԶԵՒՈՆԴ ԵՐԷՑ

(Երէցն ձախ կողմն ունի Օր. Եղիսաբեթ առնացի հագուստով և աջ կողմն իւր եղբայր։ Եափուղցի են սոքա։)

(Հրատարակութիւն «Հայք»ի)

Entered as second-class mail matter. at P.O. NewYork. NY

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պատկեր Տ. Ղեւոնդ երիցու և այլն. — Նոր Քայլ. — Աղէտք Զէյթունի. — Նամակ Կ. Պոլսէն. — Եզիպտական Պատասխանի. —Նամակ Կիլիկիայէն— Քաղաքական, Ազգային և զանազան լուրեր։

ՆՈՐ ՔԱՅԼ

Ա

Սուլթան Ապտ Իւլ-Համիտ ճարտար դիւանագէտ մ'եւ խնդճ քաղաքագէտ մ'է։ 1877ի ռուս և Թուրք պատերազմէն յետոյ յորում օսմանեան զօրութիւնն չաբաչար խորտակեցաւ և Կ. Պոլսոյ ինքնին հազիւ կրցաւ Հիւսիսային Արջին ճիրաններէն փրկուիլ, աշխարհ կը սպասէր տեսնել օսմ. դիւանագիտութիւնն արքանեկել անգղիականին, կամ իբրև բարոյապէս և նիւթապէս ընկճուած պետութիւն խաղալիկ դառնալ Եւրոպեան մեծ պետութեանց։ Սուլթան Համիտ գիտցաւ սակայն այնպիսի կարգաւ և չափով շողոքորթել դեսպաններն, այնպէս յենուլ պետութեանց հակընդդէմ շահերուն, որ այժմ կարող է Թրքա-իսլամական իւրուրոյն քաղաքականութեամբ յառաջ երթալ։ Օսմանցւոց այժմու ընթացքն այնպիսի անկախութիւն մ'ունի եւրոպական ազդեցութենէ որպիսի ունեցած չէր 1856էն ի վեր։ Սուլթան Համիտ առանց պետութեանց և Ռուսիոյ սպառնալութենէն վախնալու, առանց քրիստոնեայ աշխարհի կարծիքն ի հաշիւ առնլու՝ արձակեց Մուսա Պէկն և այժմ հազար Մուսա Պէկերու երես կուտայ և իւր ցասման անսպառ հրովն կը լափէ իւր հայ հպատակներն։

Պատրիարք Աշըգեան իրազեկ լինելով Բ. Դրան այս յանդուգն տրամադրութեան, չունենալով դեսպաններու ազդեցիկ աջակցութիւնն, բոլորովին սրտաթափ եղաւ։ Հզօրամիտ և կորովի պատրիարք մի միայն կրնար արտաքին նեցուկներէ զուրկ վիճակի մէջ յենուլ արդարութեան և ճշմարտութեան այն անտեսանելի գաւազանին որ միայն կրնար զինքն վեհ և ուղիղ կացուցանել առաջի Սուլթանին և պետութեանց։ Ս. Աշըգեան շատոնց աքսորուած կամ կախուած պէտք էր լինիլ արիական կացից ու ընթացից համար, և եթէ երկու կամ երեք պատրիարքունք կախուած լինէին այս ճգնաժամական վերջին ամաց մէջ, այսօր երկու ու կէս միլիոն Հայեր տարբեր վիճակ կունենային։

Աւա՜ղ, սակայն, այն Սուլթան որ գիտցաւ պետութեանց ազդեցութենէն պրծել իւր ներքին քաղաքականութիւն, գիտցաւ նաև նկուն ընել Պատրիարքն, ջնջել նորա ազգապետական արժանապատուութիւնն, գծուծ գործի ընել իւր ձեռաց մէջ քրիստոնեայ պատրիարքի մի գրիչն ու լեզուն, և այսպէս բոլորովին անտէր մնացած գաւառացի Հայերն անլուր խստութեամբք ճմլել։

Օսմ. կառավարութիւնն որ հայ հասարակութեան խոնարհագոյն անդամներն գլխաւորապէս կը ճնշէր ու կը կողոպտէր, սկսաւ հարուածել նորա բարձրագոյն անդամներն ալ։ Եւ վարժապետներն և վարդապետներն այլ և այլ դիւրագիւտ պատրուակօք հալածելէ և անօգուտ կացութեան դատապարտելէ յետոյ, սկսաւ ամեն գաւառի ու ամեն քաղաքի հայ երևելիներն ու հարուստներն հալածել։ Այս նոր քայլ մ'էր։ Այն ազդեցիկ և ընչեղ Հայեր որք յարգելի էին յաչս դայմագամաց և փաշայից, և որոց շնորհիւ հասարակութեան խոնարհագոյն անդամներն մինչև մէկ աստիճան կը պաշտպանուէին, այժմ նոյն ինքն անոնք հասարակ անհատներու պէս կը ձերբակալուին, կուսակալանիստ կեդրոն կը վղուին, կը դատուին ու կը բանտարկուին, կաշառք կուտան ու կ'արձակուին, ժամանակ մի յետոյ նորէն կը կոչուին ի կեդրոն, և դարձեալ կը քննուին...։ Այսպէս եղած է ու կը լինի Մարաշի, Ակնայ, Արաբկերու, Բաղեայ, Շապին Գարահիսարի, Եւդոկիոյ և այլ բազում քաղաքաց մէջ։

Հարստահարութիւնք չարունակ կը խստանան և կը տարածուին հայ հասարակութեան ամեն դասակարգի վերայ, և ամեն անհատ ցայգ և ցերեկ տագնապի և անստուգութեան մէջ է։

Բ. Դուռն թող պարծի որ կարող է Եւրոպայի աչաց առջև այսպիսի անսանձ արհամարհութեան քաղաքականութիւն մի շարունակել և հայ հասարակութեան գլուխն ջախել, արիւնն ծծել սպառել։

Թող Սուլթանն պանծայ մտածելով թէ մօտ է օրն յորում պիտի կրնայ քրիստոնեայ ազգութեան մի դիակն քրիստոնեայ պետութեանց երեսին զարնել, զդիակն այն ազգին զոր Մեծ Պետութեանց խոստացաւ դաշնագրով պաշտպանել այդ բարբարոս ցեղերու դէմ։

Ծանծա՜ղ և անդո՛ւթ քաղաքականութիւն։

Բ. Դուռն ուզելով հայ յեղափոխական միտումն իւր սաղմի մէջ խեղդել, ձեռք առած է ճիշդ այն միջոցըն որով միայ կարելի է յեղափոխական միտումն տարածել հայ ազգին մէջ։ Ամեն երկրի մէջ հարուստ դասակարգն պահպանողական կը լինի։ Հայոց մէջ ալ յեղափոխութեան հակառակող տարրն հարուստներու դասակարգն է։ Ինչ որ յեղափոխական լրագրեր ու գործիչք չէին յաջողէր ընել, Դուռն՝ մեծ փութով կ'ընէ զայն։ Հարուստ Հայերուն սակէն ինկած է կատաղաբար և զնոսա ի յեղափոխականութիւն կը բռնադատէ պատժելով զնոսա այնպիսի յանցանաց համար զորս մտարերած անգամ չեն, յեղափոխական դիտմանց համար որոց ոչ միայն օտար այլ և հակառակ են նոքա։

Պատմութեան դասերն ու Հոգեբանութիւնն կուտան ամենայն հաւաստիք թէ Տաճկահայոց հարուստներըն արագօրէն յեղափոխական կը լինին, և այս՝ շնորհիւ Դրան յիմա՛ր քաղաքականութեան։

Բ

Թշնամւոյն այս յանդուգն քայլին պատասխանող ի՞նչ նոր քայլ կառնու հայ ազգն, հայ գործիչն. — ո՛չ մի նոր քայլ։ Թշնամին կը յառաջանայ և մեք կը նահանջեմք։

Արտասահմանի Հայութիւնն շնորհիւ թերթից վարժուեցաւ գէշ լուրեր լսելու, և սկսած է առանց սոսկալու կարդալ սոսկալի լուրերն։

Հայն տղայի պէս է, գրգիռ կ'ուզէ բան մ'ընելու համար, և սակայն քան զամենայն գրգռիչ բնութիւն ունեցող լուրերն անգամ զինքն սկսած են պաղարիւն թողուլ։ Մեր թերթեր լուր տալու զբաղած էին. ահա արդիւնքն։ Եթէ սկզբունք ջանացած լինէին տալ լրոց հետ մէկտեղ, այժմ ժողովուրդն սկզբունքի զօրութիւնն կը զանէր իւր մէջ և կը շարժէր ի գործ։

Գործ որ կ'ընեմք, ընել չեմք ուզեր թերթերու բաժանորդ գրուիլ։ Շատեր հայրենասիրական մեծ գործ կատարած լինիլ կը կարծեն մէկ կամ երկու ազատական թերթից բաժանորդ գրուելով։ Այդ նախնական այնպիսի փոքր քայլ մ'է զոր ամեն գաղթական պարտի առնուլ առանց մեծ բան մ'ըրած լինելու գիտակցութեան. ժամանակ առաջ այդ քայլ յառաջդիմութիւն մ'էր գովելի, այժմ այդչափով գոհ լինիլ անգովելի պէտք է նկատել։ Թերթերն ապրեցունել դիւրին պէտք է լինի մեզ, և աւելին պարտ է նկրտիլ։ Լաւ թերթեր յոյժ կարեւոր են, բայց ամեն բան չեն։

Եթէ արդարև կը հաւատնամք և կը զօրանամք, ոչ թէ լաւ թերթերն ապրեցունել միայն այլ և մխսա-

-կարներն սպաննել պէտք է գիտնամք։ Ջլաւն պատռելու մէջ եռանդուն, գլուխն պատռելու մէջ արի պէտք է լինիմք։

Հայ գաղթական աշխարհի մէջ խմբագրապետ կայ որոյ փոքրագոյն պակասութիւնն է խորին ագիտութիւնն, և խմբագրապետ ալ կայ որ նորա գարշ և նողկալի ապերախտութեանց ծրար եղող թերթիկն գիտութեամբ և ողբալի քաղաքականութեամբ կը թեւարկէ, կը գըրկէ, կը համբուրէ՜… Ո՜ սիրելի ազգ իմ, ա՜յդքան խոր է անկումդ։

Հերի՛ք է, հերի՛ք. պէտք չէ որ այլ եւս գայթակղելի դիւրութեամբ խմբագրապետ, վարժապետ, վարդապետ, բարերար, գրագէտ, հայրենասէր և գործիչ լինին մարդիկ մեր ազգի մէջ։ Բչիկն ալ թող չբաւէ հայ սրտիկն ուռուցանելու։

Կորովի, անաչառ բայց սիրաշունչ քննադատութիւնն թող գայ բարով մղել ղմեզ յառաջ։ Հռչակենք արժանիքն, նշանակե՛նք պակասութիւնն։ Ճանաչենք տրուած արդիւքն, պահանջե՛նք մեծագոյն արդիւնք։

Գիտնա՛նք լուսոյն լոյս ու խաւարին խաւար, ուղիղին ուղիղ և թիւրին թիւր ըսել։ Ամեն ինչ իւր բուն անուամբ կոչելու սրտութիւնն ունենանք եթէ իրօք գործ կատարել կ'ուզեմք.

Երբ ազգային մարմնոյն մէջ վէրք տեսնեմք չարուալից և վարակիչ, դանակն անգթաբար մխենք խորըն, կտրենք զայն ի բաց։ Ժանտ անհատին անգութ լինելով կը գթանք ազգին։

Աքացե՛նք սուտ գործիչն ի բա՜ց, և զճշմարիտ գործիչն մղենք յառաջ։

Հայրենակի՛ցք, անհա՛տք և յանձնախո՛ւմբք, նոր քայլ առնելու ժա՛մ է, թշնամին նոր քայլ կ'առնու միշտ, թշնամին կը հրէ չարունակ և հայրենիքն անդադար կը սահի դէպ յանդունդ, փութա՛նք։

ԱՂԷՏՔ ԶԷՅԹՈՒՆԻ

Զէյթուն Մարաշի հիւսիսային արեւմտեան կողմն 2000 տնով հայ աւան մ'է։ 10—15 տուն թուրք բնակիչք եւս կան, որք Հայոց լեզուին և սովորութեանց ընտելացած են։ Այս աւանին պատմութիւնն կարի ուշագրաւ է։ Ցորմէ հետէ մեր ազգային թագաւորութեան վախճան եղաւ, մեր ազգ ամեն ուրեք հպատակ և հարկատու եղած է, միայն Զէյթուն և իւր դրացի գիւղերըն, այն է Մխալ, Ֆըրնըս և Ալապաշըլը, Տաւրոսի ապաստանած, ի դժուարամատոյցս բնակեալ և զինու զօրութեամբ պաշտպանած են իրենց կրօն և ազատութիւն։

Հայաստանեայ եղող պառակտումն սոցա մէջ եւս երեւան եկած է։ Զէյթուն չորս թաղերու բաժնուած լինելով, իւրաքանչիւր թաղ առանձին պետով մի կը կառավարուի, և իրենց մէջ ներքին խռովութիւն պակաս եղած չէ, թէև հասարակաց արտաքին թշնամւոյն դէմ միաբան գտնուած են և յաղթող։

Թանզիմաթէն առաջ տէրութեան ներսերն աւատականութիւն կը տիրէր և ամեն քաղաք պէկի մի իշխանութեան ենթարկեալ էր. այդպէս նաև Զէյթուն և իւր դրացիք օսմանեան լուծն յանձն չառնելով մնացած էին ինքնիշխան։

Այլ թանզիմաթէն յետոյ թուրք կառավարութիւնն ամեն հնար հնարած է զԶէյթուն իւր ճիրանաց մէջ առնելու։ Բնական էր որ յայսմ չյաջողէր դիւրաւ։ Այնքան գարերէ ի վեր ազատութեան մէջ մեծցած և օսմանեան վարչութեան նշանակութիւնն ամեն ուրեք տեսած և լսած ժողովուրդ մի նուաճել ոչ փոքր խնդիր է։

Կ'երևի թէ Դրան քաղաքականութիւնն եղաւ այս գործ ի գլուխ հանել աստիճանաբար և առանց աղմկի։ Առ այս նպատակ նորա որդեգրած միջոցներէն մին եղաւ շրջակայ իսլամ գիւղերու ժողովուրդն Զէյթունի դէմ գրգռել, Զէյթունի շրջանակն անձկացունել և զօրութիւն նուազեցունել։ Երբ Ռուսիայէն աւազակ և կըռուասէր Չէրքէզներն այն կողմերն շատցան, կառավարութիւնն զայնս ընտրելագոյն և պատուական գործի մի նկատելով իւր նպատակ իրագործելու, իբր երկու հազարէ բաղկացեալ հեծելազօրներ Զէյթունի վերայ յղեց։ Բայց այս անկանոն բանակն չարաչար պարտութիւն և ջարդ կրելով Զէյթունի քաջերէն՝ աւելի նոցա սրտութեան համբաւն ծաւալելու ծառայեցին։ Կառավարութիւնն ալ իւր առջի եղանակն նորէն ձեռք առաւ։

Բ. Դրան բոլոր ըրածներն գրելու համար պէտք էր ընդարձակ պատմութիւն մի յօրինել։ Մեք պիտի շատանամք այժմ նշանաւոր մէկ դէպքի համառօտ պատմութիւնն տալով իբրև ականատես և պաշտօնական գործողութեանց մասնակից ոք։

Ինչպէս ուրիշ ամեն տեղ, Զէյթունի մէջ եւս հին դրութեամբ տրոց փոխանակ թէմէթթու և եմլաքյէ տուրքերն հաստատել ուզեց կառավարութիւնն այն մասնաւոր դիտմամբ սակայն որ քաջաց քաղաքն ընկճէ տրոց ծանրութեան ներքև։

Դիտում պատուակա՜ն, բայց դժուար գործադրելի։ Ի՞նչպէս կարելի է ազատասէր ժողովուրդն այնպիսի ճմլիչ բեռան տակ առնուլ մէկէն. Օսմանեան չարաշունչ հնարագիտութիւնն ձեռնթափ չեղաւ սակայն։ Բաւական խորհելէ ու խոկալէ յետոյ առանց ուշադրաւ ձեւականութեան Մարաշէն երկու գրագիրներ յղուեցան, և (ստացուածոց) գնահատիչներ լինելու համար իրենցմէ եւս մարդ ուզելով՝ պաշտօնական յանձնախումբ մի կազմեց և գործի սկսաւ կառավարութիւնն։

Թուրք արձանագրիչներէն մին հայ գնահատիչներէն միոյն հետ սերտ յարաբերութիւն կը հաստատէ, և իբրև խորին մտերմութեամբ նմա կը յայտնէ հետևեալ գաղտնիքն. կառավարութիւնն այս արձանագրութիւններն ընելու մէջ ծածուկ նպատակ մ'ունի, որ է Զէյթունցիներն այդ ապստամբեցուցիչ լեռներէն գաղթեցունել ուրիշ տեղ, բայց նոցա տներն ու կալուածքն պիտի գնէ, ուստի այս կարի բարեդէպ առիթ մ'է Զէյթունցւոց համար, կրնան յոյժ թանկ գներով վաճառել ստացուածքն. արդ, դու զայս ոչ ոքի յայտնելով՝ մեզ օգնէ որ բարձր գներ նշանակեմք յարձանագրութեան, որպէս զի գաղթելու ատեն այս խեղճերուն ձեռքն քիչ մի դրամ անցնի։

Այս բարեկամական գաղտնիքի շնորհիւ յարաբերութիւնն մտերմական հանգամանք կ'առնու, և երկուստեք ամեն ճիգ կը թափեն տուն կոչուելու անարժան խրճիթներուն անգամ թանկ գներ նշանակելու։

Թէպէտ չենք կրնար այս մասին ընդարձակ պատմել եղելութիւններն, լաւ կը լինի որ իբրև օրինակ մի քանի մանրամասնութիւններ ի մէջ բերեմք։

Արձանագրութեան միջոցին Թրքի մի այգւոյն գին կը սահմանեն երկու հազար դահեկան, և սակայն շըրջանէն վերադառնալու պահուն սխալմամբ նոյն այգին նորէն կ'արձանագրեն այս անգամ Հայու մի անուամբ, և ի՞նչ գին —քսան հազար դահեկան։ Իրօք այգին Թրքի ստացուածքն լինելով ամ ըստ ամէ կառավարութիւնն կը պահանջէ թէ՛ Թրքէն 2000ի հաշուով և թէ Հայէն 20,000ի հաշուով։

Այգի մի երկու եղբարք հաւասարապէս իրենց մէջ բաժնած լինելով՝ մէկ եղբայրն իւր բաժին վաճառած էր Թրքի մի. արդ, գնահատութեան պահուն ինչ գին որ դրին Թրքին բաժնին, անոր հնգապատիկն դրին Հայու բաժնին։

Քաղաքէն դուրս անպիտան և անպտուղ հող մի այս ինչ Հայու անուամբ արձանագրուած լինելով, մար

դն քանիցս խնդրագիր մատոյց կառավարութեան թէ այդ հողն ինքն ձրիապէս կը նուիրէ կառավարութեան, որպէս զի վայրապար տուրք վճարելէն ազատի. խնդիրքն անլսելի կը մնայ:

Զէյթունի ջրի աղբիւրներն քաղաքէն դուրս են. ալրերց քովերն, ապառաժներու մէջտեղերն կանոյք ծաղիկ և բանջար կը մշակեն, իրենց ուսերներով ռռագելով ջուրն. կառավարութիւնն այդ ափ մի ծաղկանոցներու վերայ եւս տուրք դրած է իբրև պարտէզ նկատելով զայնս:

Այս ամենն բաւական չեն: Գրագիրներու մէջ անխիղճներ չեն պակսիր որք 2,000 նշանակուած տասցուածքի մի համար զերոյ մ'ալ ինքն կ'աւելցունէ և կը ընէ 20,000. և ուրիշ տարի ուրիշ գրագիր մ'ալ նոյն գրչի հարուածով կը հանէ գինն 200,000ի, և այսպէս կը սանղծուի տասցուածք մի որոյ գոյութիւնն անհնար է Զէյթունցւոց աշխարհին մէջ:

Բնական է հարցնել թէ տանք այսպէս գրել դիւրին է, բայց միթէ տուրքերն հաւաքել հնա՞ր է: Ո՛չ, հնար չէ: Զհամարիք սակայն թէ օսմանեան պաշտօնեայք անհնարին ետևէ ինկած ապուշներ են: Նոցա նպատակն դրամ հանել չէ լոկ, այլ ժողովուրդն նեղելու, բանտարկելու և կողոպտելու առաս առիթ ունենալ. Զէյթունն չքաւորել, տանջել, սպառել, ուժաթափ ընել: Զայնս որք անհեթեթ տուրքն վճարել անկարող են, կը քշեն կը տանին հայհոյելով, գաղանաց անդամ որջերէն աղտոտ և փտտ բանտերու մէջ կը լնուն: Այդ անգութ անագորոյն հարկահաւաքներ կը մանեն տներն և ցայդ և ցերեկ մանելով ու հեւալով խեղճ մայրերու ձեռագործն եղող մանկական զգեստներ, վերմակներ, մինչև իսկ կերակուր եփելու կաթսաներ աճուրդով կը վաճառեն և տուրքերն կը գանձեն: Եւ այս ամենուն վերայ կը յաւելուն նաև այն ամբաստանութիւնն ալ թէ Զէյթունցիք ապստամբ են, տուրք վճարել չեն ուզեր:

Հայր-Նահէլէ

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍՈՅ

Կ. Պոլիս, 2 Մայիս 1892

Վերջերս յանդուգն ոճրագործութիւնք աւելցած են Մայրաքաղաքիս մէջ: Ոչ շատ ժամանակ առաջ, առաւօտ մի լուսնալու ատեններ հայ հայավաճառ մը մայրաքաղաքիս նշանաւորագոյն պողոտաներէն միոյն շատ մօտ, նեղ փողոցի մը մէջ սպաննուեցաւ իւր սակին համար: Անկէ իբր տասն օր առաջ եւս, բամադանի մէջ, առաւօտեան դէմ չորս անձինք կը մտնեն յիշեալ պողոտային մօտ գտնուող ատաղձագործի խանութ մը: Դանակի հարուածներով չարաչար կը սպաննեն յոյն խալֆան որ խանութին վրայ կը պառկի եղեր, և ծանրապէս կը վիրաւորեն վարը խանութին մէջ պառկող հայ պատանի աշակերտ մը: Վերջերս լրագրաց մէջ հրատարակուեցաւ թէ հայ աշակերտը ուրիշ Հայու մը ընկերակցութեամբ սպաննած էր յոյն խալֆան և թէ ապա վիրաւորել տուած էր ինքզինքը որպէս զի չիմացուի թէ ինք ոևէ մասնակցութիւն ունէր ոճրին: Սակայն վաւերական աղբիւրէ կ'իմանամք թէ այդ հրատարակութիւն սուտ է: Դարձեալ այս օրերս Իւսքիւտարի տուներին մէկ թաղին մէջ, քանի մ'օրերու միջոցին, իսկ մը Հայեր տուներին տուներին կողոպտուած են: Պասը-Աղէի քովն իսկ ուրիշ Հայ մը կողոպտուած է:

Այս դէպքերն ըստ ինքեան մեծ կարեւորութիւն չունին: Եւրոպական և ամերիկեան քաղաքաց մէջ նմանօրինակ և աւելի խժդժական ոճրագործութիւնք անպակաս են: Սակայն ուշադրութեան արժանի պարագաներ կան այս դէպքերուն հետ կապակցեալ: Հսս ոճրագործութեան մը վրայ կը կարդամք: Քանի մը օր եաքը եւս կը կարդանք թէ ձերբակալութիւններ եղած են: Սակայն յետոյ բան մը չենք լսեր այլ եւս: Ոստիկանական և դատական պաշտօնէից ի՞նչ փոյթն է որ իրնան այսպիսի խնդիրներու ետևէն, քանի որ անդին կը մնայ անմեղ հայ երիտասարդներ ձերբակալելու և նեղելու աւելի անդութ բայց աւելի շահաւոր գործը: Վերյիշեալ սպաննեալ հացավաճառին մէկ եղբայրը տեսնելով որ իւր եղբօր սպաննիչներէն մին, որ ձերբակալուած էր, ազատ արձակուած է, դատաւորին կը դիմէ ըսելով նը մա թէ ինք դատ ունի այն անձին դէմ: Դատաւորը որպէս թէ շատ խողաղասէր մէկը լինելով, կը պատասխանէ, «ի՞նչ պիտի շահիս դատ ընելով:» Հաշտուէք ի՛նչ գործեր չկրնար անել: Եւ աստի կրնանք մակաբերել որ, եթէ մայրաքաղաքիս մէջ իսկ, Սուլթանին և օտարազգեաց աչքին առջև, այսչափ անտարբերութիւն կը ցուցուի արդարութիւնն ի գործ դնելու, ի՛նչ աստիճանի արդարութիւն կը գտնուի գաւառաց մէջ:

Ձերբակալութիւնք վերստին շատցած են վերջերս: Կ'ըսուի թէ Մկրտիչ Թիւթիւնճեանց անուն վաճառ մը, որ երբեմն Հայրենասիրական շարժմանց մասնակցութիւն ունեցած է եղեր, Պուլկարիայէ մայրաքաղաքս եկած է մատնութիւն և լրտեսութիւն ընելու համար և թէ արդէն բարձր թոշակաւ սկսած է իւր գործին: Թերևս նոր ձերբակալութիւններէ ոմանք արդիւնք լինին այդ անձի մատնութեանց: Սակայն կ'երևի թէ աւելի հիմնական պատճառ մը կայ այս ձերբակալութեանց: Անգղիական և պուլկար լրագրաց մէջ կը կարդանք թէ Պուլկարիոյ Ռուսճուգ քաղաքին մէջ տխնամիթով և երկաթի կտորներով լեցուած ռումբեր գտնուեր են Կարապետ անուն Հայու մը տան մէջ և թէ իմացուեր է որ այդ ռումբեր պիտի գործածուին եղեր Պուլկարիոյ իշխանին և նախարարաց նաև Վեհ. Սուլթանին կենաց դէմ դաւ դործելու համար: Վերյիշեալ Հայը յարաբերութիւններ ունի եղեր փախստականաց հետ: Պուլկարիոյ մէջ, այս յայտնութենէն ետքը, տասն և հինգ անձինք կը ձերբակալուին: Շատ հաւանական որ Պուլկարիոյ և այս տեղւոյ ձերբակալութիւնք իրարու հետ յարաբերութիւն ունենան: Որչափ կ'իմանանք, երբէք մէկուն թոյլ չըտրուիր այս տեղւոյ նոր ձերբակալեալց քով երթալ:

Աւագ հինգշաբթի գիշեր, Մայր Եկեղեցւոյ մէջ կրօնական պաշտաման միջոցին, երիտասարդ մը, որ բանտարկեալ եղբայր մ'ունի եղեր, Պատրիարքին բողոքագիր մը կուտայ, յորում բանտարկեալ ազգական ունեցողներ կը հարցնեն պատրիարքին թէ ե՛րբ պիտի յաջողի ազատել իրենց խեղճ սիրելիները: Պատրիարքը նամակը կը կարդայ և անմիջապէս «Բռնեցէք սա թըշուառականը» կը պոռայ: Երիտասարդն արդէն տուն գացած կըլլայ, սակայն հոն կը ձերբակալեն զնա: Իրականն նա կ'ուրանայ թէ ոևէ նամակ գրած լինի պատրիարքին: Սակայն երբ իւր հօր կը հարցնեն թէ իւր որդին վերջերս բարեկամի մը նամակ գրա՛ծ էր, նա ամենայն պարզմտութեամբ կը պատասխանէ թէ իւր զաւակին քանի մը ընկերներու հետ նամակ մը գրելը տեսած էր: Այս վկայութեան վրայ տղան այլ եւս չկրնար ուրանալ: Խեղճ երիտասարդը սաստիկ ահաբեկած, կը բանտարկուի, և քանի մը օր յետոյ կը մեռնի բանտին մէջ: Հաւանական չէ որ կառավարութիւնը վերջ տուած լինի նորա կենաց. վասն զի պիտի ուզէր գաղտնիքներ ստանալ անկէ. այլ թերևս տղան երկիւղէն մեռաւ կամ թէ թոյն առաւ և անձնասպանութիւն գործեց: Ահաւասիկ անձնուրացութեան այլ քիչ մը անխոհեմութեան նոր զոհ մը:

Կաթողիկոսական ընտրութեան մասնակցելու համար աշխարհական պատգամաւորաց բաւական ընտրութիւնք կատարուած են ի Թուրքիա: Անցեալ շաբթու մայրաքաղաքէս մեկնեցան յէջմիածին շատ մը վիճակաց եկեղեցական և աշխարհական պատգամաւորները: Պատրիարքը դժուարաւ յաջողած է ձեռք բերել այդ պատ-

գամաւորաց անցագիրները։ Կարծեմ թէ առաջին անգամ է որ Թուրքիոյ Հայք կաթողիկոսական ընտրութեան պիտի մասնակցին այս եղանակաւ։ Կառավարութիւնն ընդդիմացաւ Ազգային Ժողովոյ գումարման, և սակայն կարծես թէ այդ ժողով չգումարուելէն օգուտ մը յառաջ եկաւ, վասն զի կաթողիկոսական ընտրութեան մասնակցութեան եղանակն ինքնին որոշուեցաւ։ Հաւանական է որ Թուրքիոյ Հայք իրենց պատգամաւորաց միջոցաւ մեծ ձայն ունենան յառաջիկայ ընտրութեան մէջ։ Մաղթենք որ Կ. Պոլսոյ արդի պատրիարքին բարքն ու ապիկարութիւնը չունեցող եկեղեցական մը բազմի Սբ. Գրիգորի Աթոռոյն վրայ։

ԱՆԱՆՈՒՆ

ԵԳԻՊՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԻ

Գահիրէ 27 Ապրիլ 1892

Տէր,

Ձեր պատուական Հանդէսի Ապրիլ 1ի թուոյն մէջ կարդացինք Մարտ մէկ թուականաւ յօդուած մի, «Եգիպտական Նամականի» խորագրոյն ներքև, որ կուգար ընտանեցած հիւրի համարձակութեամբ գրաւել «Հայք»ի քանի մի սիւնակներ։

Շնորհապարտ պիտի լինէի Ձեզ, Տէր, եթէ թոյլատրէիք ինձ տեղաւորուելու մի քիչ Ձեր պատուական հիւրի քով հանրօգուտ տեսակցութեան մի համար։

Տ. Յօդուածագիրն, առ ի չգոյէ նորանոր բարեբարներու, կ'երթայ յաւիտենական հանգիստն խռովել բարեյիշատակ հանգուցելոյ մի, Կարապետ Գալուստեանի։ Խոնարհելով Գալուստեանի անուան առջև՝ մեք ալ մեր մեծարանաց հարկն նորա յիշատակին մատուցանելէ յետոյ՝ իբր Եգիպտացի հայ անհատ կոչումն կ'ընեմք մեր ապագայ երեսփոխանաց կրթասիրական և ազգասիրական զգացմանց իրենց ուշադրութեան առաջին և գլխաւոր առարկայ ընել ազգային դաստիարակութեան աւագ խնդիրն։

Վարժարանէն Տ. յօդուածագիրն կ'երթայ ապա յեկեղեցի. հետևինք նմա, եթէ կը հաճիք, ճշդելու համար՝ որ Գեր. Իզմիրլեան Սրբազանի օրով եկեղեցին ո՛չ թէ կանգնեալ կառուցուեցաւ այլ վերանորոգուեցաւ. և թէ յուղարկաւորութիւն ննջեցելոյն՝ որ տեղի տուած էր օտար լրագրաց կծու քննադատութեանց, որոց հետևանքն եղաւ վերանորոգութիւնդ, էր մեր ողբացեալ բարեկամ Թումանոֆին։

Յօդուածագիրն ողջոյն մի կուտայ ապա մեր Գեր. Առաջնորդ Տէր Գէորգ Ծ. Վ. Իսթիւճեանի և կը դիտէ թէ ահագին մի ժողովրդականութիւն չվայելեր՝ ըստ որում նորա ընտրութիւնն «պայքարներու և յուզմանց, Նար-Պէյ Սրբազանի թեր ու դէմ շարժմանց հետևանօք կատարուեցաւ, ևն։»

Սպասելով որ Գեր. Իսթիւճեան եթէ ունի ժողովրդականութիւն՝ զօրացունէ, եթէ չունի՝ շահի, էջմիածնէ վերադարձին գործադրելով Սահմանադրութիւնն, որ միակ և սիրելի օրէնքն է ազգին՝ յուսալից հրաժեշտ կուտամք նմա, ծունր դնելու համար առաջի հոյակապ քերթողին, փարատելու թիւրիմացութիւն մի, այն թէ Եգիպտոսի մէջ Նորին Սրբազնութիւն հակակիրներ ունեցած է երբէք՝ զոր կրնար առթել թեր ու դէմի պէս բառեր։

Պարտք կը համարիմք այս լուսաբանութիւնն ընել մանաւանդ անոր համար, որ դառնագոյն հարուածի մի ներքև կը գտնուի արդէն Ն. Սրբազնութիւն։

Միթէ Գաւ. Ընդ. Ժողովոյ Վսեմ. Ատենապետն ցաւ իսկ չյայտնե՞ց որ Նար-Պէյ Սրբազանի անձնականութիւնն խառնուած է սկզբանց խնդրոյ մի՝ զոր կը հարկադրուէր պաշտպանել յայնժամ Ընդհ. Ժողովն. սկզբունք; զոր եթէ յարգած և յարգել տուած լինէին ցայսօր ուրիշ գաւառներ՝ մեր քառասունէ աւելի առաջնորդութիւնք իրենց օրինաւոր առաջնորդներ կ'ունենային, փոխանակ զի այսօր նոցա կէսէ աւելին կը կառավարուին պատր. փոխանորդներով և տեղապահներով, դրութիւն մի՝ որում կանոնաւորապէս կը հետևի պատրիարքարանն առենէ մ'ի վեր։ Եւ այն չէ՞ր միթէ խընդիրն՝ որ երբ գաւառն իւր առաջնորդն ընտրելու կը զբաղէր Պատրիարքարանն կ'ուզէր պատուիրակ մ'ալ հոն ղրկել։

Նաև քերթող և բազմալեզու առաջնորդ մ'ունենալու հաճոյքին պէտք չէր զոհել օգուտն ազգին լըրութեան՝ երբ այդ օգուտն կը պահանջէր քանի մի բարձրաստիճան բանիբուն եկեղեցականներ ունենալ եթէ ոչ ի Հայաստան՝ գէթ ի Պոլիս։

Հրաժեշտ առնունք Ն. Սրբազնութենէ պատասխանելու համար քանի մ'ազնիւ բարեկամաց այն դիտողութեան, որով կ'առարկեն թէ՝ եթէ իբր պատուիրակ ընդունուած լինէր Խորէն Սրբազան յԵգիպտոս՝ կը փրկուէր վերահաս հարուածէն, և թէ այդ պատճառաւ իսկ էր, որ Պատրիարքարանն կ'ուզէր հեռացնել զնա։

Թողութիւն կը խնդրեմք մեր արգոյ յօդուածագրէն վայրիկ մ'ակամայ իրմէն բաժնուելուս։

Մեզ կը թուի թէ անզօր է այդ առարկութիւն։

Նախ այն ատենի համար սոսկ գուշակութիւն մը էր այս. և եթէ ոմանք գուշակելու ձիրքն ունէին մեղադրելի չէին ուրիշներ՝ անգիտանալով պատահելիքն. մանաւանդ երբ Պատրիարքարանի քթին տակ հրատարակուող թերթեր անխրատ և անտեղի կը գտնէին Պատրիարքարանի որոշումն. յիշենք նաև Արև. Մամուլն Զմիւռնիոյ, որ բացէ ի բաց գաւառային սահմանադրական իրաւանց մի բռնաբարում կը նկատէր Պատրիարքարանի ընթացքն, կը մտածուի նաև թէ՝ եթէ հարուածն պետական էր՝ ի՞նչպէս պիտի արտօնէր Բ. Դուռն մեկնումն Նար-Պէյի. իսկ եթէ պատրիարքական էր տղայական պիտի լինէր կարծել թէ Պատրիարքարանն իւր տալիք հարուածէն խնայելու համար կ'ուզէր հեռացնել զԽորէն Սրբազան։

Դառնամք մեր ազնիւ յօդուածագրին՝ որ պիտի խօսի մեզ հանրագրի մի վրայ, ըսելու համար որ այս հանրագիր պատրաստեալ էր հանգուցեալ Խալիլ Մուհամմէտ Թէվֆիք Բաշայի յուղարկաւորութեան հանդիսին Գեր. Առաջնորդ Հօր բացակայութեան առթիւ այլ չներկայեցուեցաւ։

Որովհետև Ն. գերապատուութիւն իւր պաշտօնավարութեան առաջին օրերն զինքն շրջապատող անձանց վրայ չափազանց վստահութեամբ մի՝ ամեն հրահանգ անոնցմէ սպասելու մեղքն գործեց՝ ուստի զինքն շրջապատող Քաղաքական Տեարք թող նկատեն նոյն հանրագիրն, եթէ կը հաճին, առ երկրին վեհապետն՝ երախտագիտութեան և յարգանաց վերջին մի պարտք իրենց յիշեցունելու համար մի յուշարարութիւն և ոչ թէ վիրաւորում։

Յօդուածագիրն կը խօսի ապա ծրագրի մի վրայ, որոյ շատ յորջորջուեցաւ անունն առանց պարունակութիւնն գիտնալու։

«Նախորդ առաջնորդ Գեր. Իզմիրլեան Սրբազան, կըսէ, իւր անձնական փորձով համոզուած լինելով, որ Եգիպտոսի վիճակը սահմանադրապէս կառավարել եթէ ոչ անհնարին գէթ շատ դժուարին է՝ միջավայրի պահանջմանց յարմարցուած վարչական ձևի մը տարերքն յօրինած էր, զորոյ ապա Պատրիարքարանէն ալ վաւերացուելէ և ծրագիր անուամբ մկրտուելէ զկնի, գործադրութիւնն կտակած էր ապագայ առաջնորդին։»

Ցորչափ մեք կրցինք տեղեկանալ Պատրիարքարանըն ծրագիր վաւերացուցած չէ. եթէ այնպէս լինէր՝ Շէրիաճեան էֆ. առիթ պիտի չունենար «անհունապէս»

բարեփոխելու դայն, ինչպէս քիչ մի յետոյ կ'աւետէ մեզ Յօդուածագիրն։

Տ. Յօդուածագիրն կը զարմանայ ապա թէ երկու տարի չարունակ ծրագիր չգործադրուեցաւ և ո՛չ ոք ոևէ առարկութիւն ըրաւ. թէ այս առարկութիւնք նոր Առաջնորդի օրովն է որ կը լինին. ևն։

Ըստ մեզ, եթէ զարմանալի բան մի կայ հոս, ա՛յն ալ յարգոյ յօդուածագրի զարմանքն է։ զի եթէ այժմ է որ կը լինին առարկութիւնք, պատճառն հաճած է յայտնել յօդուածագիրն, ըսելով թէ «Որոշուեցաւ վերջապէս ի գործադրութիւն դնել Իզմիրլեան ծրագիրը, որ այժմ չնորհիւ Կարապետ Էֆ. Շէրիտճեանի անհունս բարեփոխուելէ զկնի ի նորոյ ընտրելի թաղական ժողովոյ տրամադրութեան ներքև պիտի դրուի։»

Չէ կարելի մեզ խօսիլ ոևէ ծրագրոյ մասին՝ քանի ծածուկ կը պահուի ժողովրդէն անոր պարունակութիւնն։

Կ'աւելցնեմք միայն, թէ այժմու Գաւ. Ընդհ. Ժողովն ամբողջովին լուծեալ լինելով՝ ծրագիր ընդունելու և գործադրել տալու հեղինակութիւն ունեցող ժողով չկայ։

Իսկ եթէ առիթը պահանջէ՝ յուսանք թէ «Հայք»ի պատ. թղթակիցն սոյն Հանդիսի ուղղութեանն համապատասխանող եղանակաւ մի պիտի պաշտպանէ ժողովրդեան իրաւունքներն, բայց մանաւանդ կը սիրենք յուսալ որ առիթ չընծայուիր շնորհիւ սահմանադրասիրութեան Գեր. Առաջնորդ Հօր։

ԻՐԱՒԱՄԷՐ

ՆԱՄԱԿ ԿԻԼԻԿԻԱՅԷՆ

Կիլիկիա, ... 28 Ապրիլ, 1892

Ապրիլ 25ին լուր ստացանք Հալէպէն թէ Զէյթունցի բանտարկելոց հարցաքննութիւնքն աւարտած և վճիռներն տրուած են։ 22 հոգի ազատ արձակուած են. մէկ հոգի ի մահ դատապարտուած է, 5 հոգի ցկեանս աքսորի, 6 հոգի տասնեհինգ տարի բանտարկութեան, մնացեալ ոմանք ալ հինգական և երեքական տարի բանտարկութեան։

Հաճընէն հոս լուր հասաւ անցեալ օր թէ կառավարութիւնն փակել տուեր է բողոքականաց վարժարաններն վասն զի հրամանագիր չունին այդ վարժարաններու համար։ Մր. Էտէմս միսիոնարն ուղեց այդ բանին համար Հաճըն երթալ, բայց շատ դժուարութեամբ կրցաւ անցագիր ստանալ կառավարութենէն։

Ա. Ա.

ՅՕԼ ԵՒ ՅՕԼՔ

ԲԱՂԱԲԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՉԱՆԱՉԱՆ ԼՈՒՐԵՐ

— Թիֆլիզի թեմական պատգամաւորի ընտրութիւն վերստին կատարուելով՝ «Մշակ»ի մեծայարգ խմբագիրը Տիար Արծրունի քուէից մեծամասնութեամբ պատգամաւոր ընտրուած է։

—«Դանուբ» դադարեալ թերթի խմբագիրն Թիւթիւնճիէֆ առաջնակարգ մատնիչներու կարգն անցած է, որպէս Կ. Պօլսէն և Բուչուքէն մեզ ուղղեալ նամակներ կը ծանուցանեն։ Շատ ողբալի և շատ խրատալի դէպք մ'է այս։ Սովրինք ուրեմն խմբագրի, հայրենասիրի ու գործիչի սուտն ու ճշմարիտն իրարմէ զանազանել։ Գիտնանք թէ վատեր ալ կարեն թերթ հրատակել։

Ցաւով կը դիտենք թէ Թիւթիւնճիէֆի այս դասալիքութենէն միութեան Դատին վնաս և արատ հանել կը ջանան ոմանք։ Այդ ալ վատութիւն մ'է։

«ՀԱՅԱՍՏԱՆԻ» ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆ ՎԵՐՍԿՍԵԱԼ

«Հայաստան» թերթն զոր մեռեալ կը ծանուցանէինք մեր նախորդ թուով, յետ վեցամսեայ ընդհատման վերսկսած է հրատարակուիլ։

Ուրեմն դարձեալ ունիմք երկու ամսաթերթ, «Լ'Առմէնի» և «Հայաստան», միևնոյն նպատակին նուիրեալ, այն է Հայկական Դատն քաղաքակիրթ աշխարհի ծանօթացնել և զՀայն իրրև ընդունակ ցեղ համակրելի ընել նմա։

Այս երկու թերթեր ևս ֆռանսերէն են, դիւանագիտաց աշխարհին կը խօսին դիւանագիտութեան պաշտօնական լեզուաւն։ «Լ'Առմէնի»ի ընագրին կցուած է սակայն անգղիերէն թարգմանութիւնն ալ, իսկ «Հայաստանի» ընագրին՝ հայերէն թարգմանութիւն։ Անգղիերէն թարգմանութիւնն իրական առաւելութիւն մի կը ընծայէ «Լ'Առմէնի»ին, քանզի ֆռանսերէն չհասկցող բազում մշակեալ օտարականներ կրնան անոր շնորհիւ ճանաչել Հայկական Խնդիրն ու հայ ազգն։ Սակայն Հայերէն թարգմանութիւնն «Հայաստան»ին արժէքն շատ չաւելցուներ։ Օտարականաց համար յատկապէս պատրաստուած ընագրին հայերէն թարգմանութիւնն հրատարակել Հայ ընթերցողաց համար՝ կը թուի աւելորդ աշխատութիւն և դրամի ու ժամանակի հակատնտեսապատում։ Զեմք կարծեր թէ հայերէն մասին ծախքերուն կէսն կրնայ հոգացուիլ հայ բաժանորդագրութեամբք. այն Հայեր որ նուիրատուութեամբ կօգնեն, ֆռանսերէն մասին համար կ'օգնեն։

Եթէ «Հայաստան» անպատճառ հայերէն թերթ ևս կը բաղձայ լինիլ, խորհուրդ կուտամք որ հայերէն մասն յատկապէս հայ ընթերցողաց համար խմբագրէ և թղթակցութեանց սապարէգ տայ։ Այդ պայմանաւ միայն հայերէն մասն պիտի կրնայ ծառայել ազգին և ևս թերթին արժէքն ու հայ բաժանորդաց թիւն աճեցուցանել։

»Հայաստանի» տարեկան բաժնեգինն է 12 ֆր. 75 սանթիմ, հասցէն է, 8 Thanet place, W. C. London, England:

—Այնթապի մէջ (ի կիլիկիա) գինեգործական ընկերութիւն մի կազմած են Հայեր, և պաշտօնապէս հրաւէր կարդացած են որ Եւրոպայի մէջ գինեգործութեան արհեստն սովրած անձինք երթան գործել այդ ընկերութեան տրամադրութեան տակ՝ Այնթապի մէջ։

Այդպիսի անձինք կրնան գրել առ Monsieur Joseph Boyadjian, Aintab, Turquie d'ASIE.

—Հայ Երիտասարդաց Քրիստոնէական Ընկերութիւնն Դաշտային հանդէս մի պիտի տայ ի Ֆլորէլ Փարք, Լօնկ այլընտ, Ն. Ե., Մայիս 30ին 1892։ Կազդուրանք, ճաշ և դաշտային զուարճութիւնք, գինն է 25 սէնթ։

Ծան.— Գնա Արեւելեան 34դ Փողոցի «Ֆէրին» և անկէ անցիր ի Լօնկ Այլընտ Տիփօն, ուր իժամ 8,50 առաւօտեան, պիտի ընդունիս ձրի թիքէթ երթալու և վերադառնալու համար։ Եթէ անձրևէ հանդէսն տեղի պիտի ունենայ ի թիւ 209 Արեւելք 42դ Փողոցի մէջ։

— Ուրախ եմք տեսնել թէ «Լ'Առմէնի» թերթին նըկատմամբ մեր հրաւէր լսելի կը լինի հայրենասէր երիտասարդութեան կողմանէ։ Նիւ Եորքի մէջ խումբ մ'երիտասարդներ որոշած են բաժանորդ գրուիլ քանի մի օրինակներու և զայնս ցրուել Ամերիկացւոց մէջ։ «Լ'Առմէնի» Մայիսի թիւն (43դ թիւ) կը պարունակէ ի մէջ այլոց զպատճէնն շրջաբերական նամակին զոր Մեծայարգ խմբագիրն ուղղած է վեց անգղիական հիւպատոսաց կամ փոխ-հիւպատոսաց ի Թուրքիա, նոր Պլիու Պուքին առթիւ։ Այդ նամակ Տիար Զերազի գրչին փառաւորագոյն արտադրութեանց մին է։

— Երէկ, չորեքշաբթի օր, սկսւեց Կարսում այն խումբ Հայերի գործի քննութիւնը, որին մեղադրում են կառավարութեանը դիմադրութիւն ցոյց տալում և ռուս-թիւրքաց սահմանագլխում սպանութիւններ գործելում: Նախագահում է Բակալօ, մեղադրում է Սուլին և պաշտպանում է մեղադրուածներին Մնացականեանց: Վկաների թիւը 150 է: Մեղադրուողները 40-ից աւելի են:

«ՄՇԱԿ»

— Թագաւոր Կայսրը բարեհաճել է շնորհել.

Ս. Աննա չքանշանի երկրորդ աստիճանը— փոխգնդապետ Գրիգոր Սահակեանցին և Քութայիսի նահանգի պետական կալուածքների կառավարչի օգնական Ստեփաննոս Խօջայեանցին:

Նոյն չքանշանի երրորդ աստիճանը Յարութիւն Սահառունի Ղամազեանցին:

Ս. Ստանիսլավի երկրորդ աստիճանը—կապիտան Թոմաս Նազարբէգեանցին:

Նոյն չքանշանի երրորդ աստիճանը—փոխ-կապիտան Մարտիրոս Պօղոսեանցին:

Ս. Աննա չքանշանի երկրորդ աստիճանը—Թիֆլիզի վերաստուգիչ տանի աւագ վերաքննող Աւետիս Վարդապետեանին:

Ս. Աննա չքանշանի երրորդ աստիճանը—Անդրկովկասեան երկաթուղու ինժեներ Նիկողայոս Զուրաբեանցին:

«ԱՐՁԱԳԱՆՔ»

—Սուլթան Համիտի ջղային ծանր հիւանդութենէ բռնուած լինելուն լուրն պաշտօնապէս հերքուած է: Այդ պաշտօնական հերքման կը սպասուէր:

—Պուլկարիոյ դիւանագիտական գործակատար Վուլքովիչի կարծեցեալ սպանիչներն, Մէրճան և Քրիսթոյ, մահուան դատապարտուած են: «Թան» տարօրինակ կը գտնէ այս վճիռ նկատելով որ ըստ վերջնագոյն լրոց՝ ճշմարիտ ոճրագործներն ապաստանած են ի Ռուսիա:

—Սմբատ Շահազիզեանի գրական և մանկավարժական գործունէութեան 30դ տարեդարձն տօնուած է Ապրիլ 21ին ի Մոսկուա:

—«Տհը Նուներն էնտ Իւովրթայզըր» լրագիրէն կը տեղեկանամք թէ Օպըրնի Աստուածաբանական վարժարանին մէջ ընթացքն աւարտած է Պատ. Վահան Գ. Պէչկէօթիւրեան և Մայիս 18ին երէց ձեռնադրուած է Կեդրոնական Երիցական Եկեղեցւոյն մէջ: Ձեռնադրութեան հանդիսին մէջ երգուած է երգ մի զոր Տկն. Ա. Լ. Մապէթ գրած և ձօնած է հայ Նորընծային:

Նորընծային հօրեղբայրն, Պատ. Սահակ Պէչկէօթիւրեան ևս, նոյն վարժարանի նախկին ընթացաւարտներէն, երկու տարիէ ի վեր «Պար Սէնթըր»ի մէջ ամերիկեան եկեղեցւոյ մի երէցն է:

Պատ. Վ. Պէչկէօթիւրեան, որպէս նոյն թերթն երկարօրէն կը պատմէ, Խարբերդի մէջ «Ասպարէզ» անուն ձեռագիր թերթ մի խմբագրած լինելով՝ դատուած և դատապարտուած է Թուրք կառավարութենէն: Մեր փախստական հայրենակիցն ի հարկէ չհամարձակիր հայրենիք վերադառնալ թէև ամերիկեան քաղաքացի է այժմ:

—Հայկ. Միութեան 137դ նիստն տեղի ունեցաւ Մայիս 21ին ատենապետութեամբ Տի. Յ Հիւրմիւզի և ներկայութեամբ անդամոց և հիւր ունկնդիրներու ըստուար թուոյ մի: Նոյն երեկոյի ատենախօսն բացակայ գտնուելով՝ միութեան անդամներէն մին՝ Տր. Մ. Ս. Գաբրիէլեան ատենախօսեց նիւթ առնլով զՖռանսա 1870-1871ի պատերազմէն ի վեր: Ֆռանսացւոց չարաչար պարտութիւնն և յայնմ հետէ կատարուած յառաջդիմութիւնն նկարագրելով ընդհանուր հետեւութիւններ հանեց ազգաց զօրութեան և տկարութեան պայմաններուն նկատմամբ, և այդ պայմաններու հիմանց վերայ ցուցուց թէ ինչո՛ւ օսմանեան պետութիւնն կործանմանէ չկրնար փրկուիլ և թէ ինչո՛ւ հայ ազգն յոյս կը տածէ նոր կեանք մը սկսելու:

Յաւարտ ատենախօսութեանն ունկնդիրք երկարօրէն և եռանդագին ծափահարեցին:

Նստին մնացեալ մասն դռնփակ եղաւ, որ տեւեց իբր երեք ժամ: Ըստ ոմանց Ընկերութիւնն մաքրողական դեղի մի պէտք ունէր ինչ ինչ գրգռիչ և թունաւոր տարրերէ ազատելու համար, ըստ այլոց այնպիսի լիղի դեղի անհրաժեշտ պէտք չունէր Միութիւնն: Վերջնական որոշումն թուի թէ գալ Նստի մէջ պիտի տրուի:

Տղայք կան որք լաւ խնամ կընդունին ի ծնողաց, սննդարար կերակուրներ կ'ուտեն և սակայն կը մնան վատոյժ, դալուկ. ինչո՞ւ, վասն զի նոցա փորին մէջ ճճիներ կան: կրնայ լինիլ որ մէկ կամ երկու ճճի գլանուին երիզակ (թէնիա, նամազ պօզան) կոչուած տեսակէն, և սակայն բաւական կը լինին առողջութիւնն խանգարելու և մինչև անգամ ցնցումներ պատճառելու զօրութեամբ այն թունին զոր յառաջ կը բերեն աղեաց մէջ: Ճիշդ այդպէս կը պատահի նաև ընկերութիւն կոչուած մարմիններուն: Այդ է Հայկ. Միութեան ալ ախտն: Մաղթենք որ քաջութեամբ առնու մաքրողականն և բըժշկուի ու ապրի քաջառողջ:

—«Հայք»ի հրատարակման նպաստելու համար Թրոյէն համակրող մի մէկ թալէր, և համակրող մի Նիւ Եօրքէն նոյնպէս մէկ թալէր նուէրեցին: Հրապարակաւ կը յայտնեմք նոցա մեր անկեղծ շնորհակալիք:

—Խորէն Նար-Պէյի խնդրոյ մասին Կ. Պոլսէն «Հնչակ»ի ուղղեալ թղթակցութիւն մի հետեւեալ բացատրութիւնն կուտայ: Սուլթանի Նախագահութեան ներքև յանձնաժողովոյ մի մէջ կ'որոշուի զԵգիպտոս բոլորովին վաճառել Անգղիոյ. Նար-Պէյ Սրբազան կերպիւ իւիք իմանալով այս գաղտնիք՝ կը հաղորդէ ռուսական և ֆըռանսական դեսպանաց, և սոքա բողոքելով կ'արգելուն որոշման գործադրութիւնն: Կառավարութիւնն յետոյ կը գտնէ Նար-Պէյի բռնուած թղթակցութեան մէջ ապացոյցն այս անցքին, և սակայն թէթեւ պատժով կ'ըստիպուի շատանալ առ ահի դեսպանացն:

Նոյն թերթի հաղորդուած լրոց նայելով Տիգրանակերտի և Մշոյ մէջ տեղ ինկող դաշտին մէջ շատ չփոթութիւն կայ. Տիգրանակերտէն վաշտ մի զօրք յղուած են կասկածելի Հայեր ձերբակալելու և հսկողութիւն ընելու համար որ Հայեր զէնք չփոխադրեն: Պըշէրիկայ կողմերն ոչ միայն շատ Հայեր այլ և մի քանի նշանաւոր Տաճիկներ ձերբակալուած են, ոմանք իբր թէ իրենց անհսկող գտնուելուն պատճառաւ և ոմանք ալ իբր Հայերու համախոհ և դաւակից: Այս կարգէն են Մահմէտ Ռէշիտ և Իպրահիմ աղա, Ֆարտինի իտարէի ժողովին անդամներ, որք Տիգրանակերտ տարուած են: Տաճիկներու այսպիսի պատճառաւ ձերբակալման լուրն մեծ կարեւորութիւն ունեցող լուր մ'է: Կառավարութիւնն սակայն իւր տենդոտ գործունէութիւն կը շարունակէ և չէյխերըն ու նշանաւոր չարերն իւր գործիքն են, ինչպէս Հաճի Թայիպ Մշոյ մէջ, չէյխ Մահմէտ՝ Խիանու կողմն, Տուտէրի չէյխ Էօմէր՝ Խուլփայ կողմերն: Շէյխ Մահմէտ կը գրգռէ Խիանց Քրդերն քալել Տալորկայ վերայ, իսկ ինքն անձամբ կ'ուզէ գլուխն անցնիլ Բադրանցի Քրդերուն և քալել Պերմայ վերայ: Տալորիկ և Պերմ կորիճ Հայերէ բաղկացեալ և երկար ժամանակէ ի վեր կառավարութեան աչքին փուշ եղած նշանաւոր գիւղեր են, մանաւանդ առաջինն որ 20 տարիէ ի վեր տուրք չէ վճարած և գրեթէ անկախ է:

—Մեր թերթի մէջ հետեւեալ համառօտութիւններն կը գործածեմք:— Տի. Տիար: Տրք. Տեարք: Տկն. Տիկին: Տկք. Տիկնայք: Տր. Տօքթէօր: Պ. Պարոն: Մր. Միսթըր: Փր. Փրոֆէսէօր: Բտ. Բժշկապետ: Խտ. Խըմբագրապետ: Վտ. Վարդապետ: Սր. Սրբազան:

ՅՈՎՀԱՆՆԷՍ Մ. ՀԱՅԿՈՒՆԻ

Պատիւ ունի ծանուցանել թէ իւր 1554 B. Way, 46 *և* 47*դ Փողոցներուն միջեւ*
Coustantinople Bazaar*ի (Քոնսթանթինօփըլ Պազար) մէջ ունի Թրքական մեծաքանակ ձեռագործներ* (embroidery) *գորգեր (խալի), ուրիշ զանազան Թուրքիոյ ապրանք, և կը ծախէ դիւրագին գներով այն Հայերու որք կ'ուզեն ամարանոցներն և այլ տեղեր երթալ վաճառականութեամբ, և անոնց ևս որք կ'ուզեն ընծաներ տալ իրենց բարեկամներուն և գործարանատէրներուն: Թէ ապրանաց հարազատութեան և թէ գներու չափաւորութեան մասին կրնամք կատարելապէս վստահեցունել մեր Հայրենակիցները, ինչպէս արդէն շատեր փորձով գիտեն:*

Հայե՛ր

Երբ նոր գլխարկի, օձիքի կամ ուէ է արական հանդերձեղէնի պէտք ունենաք, գնացէք New York Hat House, 14 Front Street, Worcester, *որ Մէյն փողոցին մօտիկ է, հոն պիտի գտնէք լաւ ապրանքներ միայն, և շատ աժան:*

LANTELME'S

HOTEL & RESTAURANT,

40 UNION SQUARE NEW YORK CITY
16 *և* 17 *րդ փողոցներու միջև արևելեան կողմն:*
—Ընտիր Գաղղիական Խոհարարութիւն—
Նախաճաշ 40 և ճաշ 75 սէնթ

ՓՈԽԱՆԱԿԱԳԻՐ

Թուրքիա դրամ ղրկելու համար ոչ մի տուն Ամերիկայի մէջ կրնայ տալ այնչափ դիւրութիւն և ներշնչել այնչափ վստահութիւն որչափ կուտայ Կիւլպէնկեան մեծ տունն որ ճիւղեր ունի Թուրքիոյ բոլոր կողմերն և Եւրոպիոյ նշանաւոր քաղաքաց մէջ: Ամերիկաբնակ Հայք որ դրամ ղրկել կ'ուզեն ի Թուրքիա կրնան ամենայն վստահութեամբ դիմել առ Տի. Կիւլլապի Ս. Կիւլպէնկեան,

53 Cedar St. N.Y.

L'ARMENIE–ARMENA

Անգղիերէն և Ֆրանսերէն ամսաթերթ երկլեզուեան
Տարեկան բաժնեգինն է 2 թալէր և կէս կամ 12 ֆր և կէս
Խմբագիր M. TCHE'RAZ

33 DE VERE GARDENS, LONDON, W.
ENGLAND

PHARMACIE FRANCAISE,

NORBERT FRANCK.

AVENUE, NEW YORK.

Դեղագիրք կը պատրաստուին խնամով

HAGOPIAN
PHOTO-ENGRAVING CO
3 Great Jones St. New York
Engraving for all purposes of
illustration in line & half-tone.

BUSH & CO
ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.
ԳԵՂԱԳՈՐԾ
(հաստատեալ ի 1849)
56 FRONT STREET WORCESTER, MASS.
Դեղագիրք խնամով կը պատրաստուին և չափաւոր գնով

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՄԱՐԳԱՐԱՆ

(Չափաւոր օրինակներ միայն տպեալ)

Սոյն Մարգարան 128 *երեսներէ բաղկացեալ և* 36 *ձևերով բացատրեալ, ինքնուսուցիչ գրքոյկ մ'է գլխաւորական մարզանաց և մարտագիտական սկզբանց:*

Գինն որևէ հասցէի համար մէկ թալէր կամ հինգ ֆրանք: Վեց կամ աւելի օրինակներ գնողին, հարիւրին 25 *զեղչ կը լինի: Կրնայ ստացուիլ «ՀԱՅՔ»ի Խմբագրութենէն կամ ուղղակի հեղինակէն, հետևեալ հասցէով,*
G. Casbarian, Gen. P. O. Brooklyn, New York U. S. A.

P. SHALJIAN
9 SPRUCE ST. NEW YORK
ԳՐՔԵՐ ԵՒ ՏԵՏՐԱԿՆԵՐ ԿԸ ԿԱԶՄԵՆՔ
ԳԻՆ ՉԱՓԱՒՈՐ
Կ Ա Զ Մ Ը Ն Տ Ի Ր

MARK F. COSGROVE
ԿՕՇԻԿՆԵՐ, ՄՈՅԿԵՐ ԵՒ ԲԼԻՊԸՐՆԵՐ
78 Front St., Corn Bigelow Court
WORCESTER MASS.

Այս է ամենէն աղէկ խանութն Վուստըրի մէջ, ուր կրնաս գնել ամեն տեսակ կօշիկներ մոյկեր, և կօշիկի բլիփըրներ: Հրամէ եկուր անգամ մը և տես թէ ինտոր լաւ ընդունելութիւն կուտանք մեզ այցելող Հայերուն:

ԱՒԵՏԻՍ ՆԱՀԻԿԵԱՆ

Պատիւ ունի ծանուցանել թէ երկար տարիներու փորձառութեան շնորհիւ ամենեն ապահով և աժան գըներով փոխանակագիր տալ կարող է Խարբերդու և Պոլսոյ վրայ, և փարա կամ թիքէթ ղրկել Մարսիլիա:

Ունի նաև ընծայի շատ յարմար Տաճկական Չինական, Հնդկական և Ճաբոնական ամեն տեսակ ապրանքներ:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ. Գործերնուս խաթրին համար ստիպուած չեմք մեր անունը կորսնցնել և օտար անուն մը կրել, մենք բուն Նահիկեան ենք: Մեզ գրել հետևեալ հասցէիւ

A. N. Nahikian, 39 Pleasant St. Worcester, Mass.

— *«ՀԱՅՔ»ի* 1891 *տարին ամբողջ կապուած կը ծախուի* 2 *թալէր* 5 *սէնթի:*

Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն
Մ. Ս. Գ Ա Բ Ր Ի Է Լ Ե Ա Ն